

Պաղտին Բ. ի առատաձեռնութեան շնորհիւ, բլուրին գազաթը շինուեցաւ վանք մը եւ խաչաձև եկեղեցի մը, 1131 ին սկսաւ և աւարտեցաւ 1151 ին Ռուսիտրեան յերան (Montjoie) Ս. Սառնոկ անունով: Եկեղեցին մզկիթի փոխուած է, եւ իսլամները մարգարէին ի յիշատակ տապանաքար մը կանգնած են (Bar. gd. էջ 290-292):

3. Կարիաբարիմ (Անաթովք^(*)). — Կարիեք կը կենայը Աստուածաշունչի նշանաւոր Կարիաթարիմն է: Երկրին ամենէն խոշոր գիւղերէն մէկն է ու եւրոպացիներէն կը կոչուի Abou Gôche, անունովը այն Շէյխին որ ԺԹ. դարուն սկիզբը իր աւազակութիւններով սարսափեցուցած էր բոլոր ճամբորդները: Իսլահիմ փաշա 1830 ին վերջ տուաւ այս աւազակութեան:

Յովհաննէս եպոս. Երուսաղէմացի այս տեղւոյն մասին հետեւեալ կերպով կը գրէ. « . . . և անցանելով գնոքօք գան ի Չեշվեղի կոչեցեալ գիւղն, որ հեռի է յերուսաղէմէ դ. ժամաւ: Եւ յաւանդութենէ լաթինացւոց ասեն թէ սա է Անաթովթ քաղաքն Երեմիայի մարգարէին, և կայ կառուցեալ եկեղեցի մի յոյժ գեղեցիկ սրբատաշ քարիւ, բայց առաստաղն փլեալ է և տուն ոչխարաց արարեալ են: Ասի ի ծերունեաց թէ՛ և ի ժամանակս քրիստոնէից եկեալ ուխտաւորքն աստ արգել անէին առ ի խոստովանիլ զմեզս, և մաքրեալ հոգւով ապա մտանէին ի սուրբ քաղաքս Երուսաղէմ» (Հան. էջ 71):

(*) Ս. Տեղեաց հին տօնակարգը կը գտնէ Կարիաբարիմը Անաթովթէն. առաջինը կը նկատէ իբր սրբավայր Հին Ուխտի տապանակին (Տօնն 2 Յուլիս), երկրորդ՝ Երեմիա մարգարէին (Տօնն 1 Մալիս):